

## Իմենսուս

Մարտի 10, ժամը 14:21

Երկու սառը կաթիլ դեմքին, հազարավոր ղողանջներ ականջներում եւ ճնշող ցավ ծոծրակի շրջանում... “Ալեքսանդրիայից Սալոնիկ”... Մթնոլորտի ողջ խոնավությունը ներծծվել էր մաշկի մեջ: “Տոպիո”... Ցավը սրի պես խոցում էր գանգն ու կաթվածահար անում գիտակցությունը: “Մարդատար նավ”... Քթի մեջ սողոսկեց սրտխառնոց հարուցող ծանր հոտը: Եվս մի քանի կաթիլ հարվածեցին շուրթերին: Կոպերի բարակ ճեղքերի միջից երեւաց առաստաղը. փտած փայտը հազիվ էր ծածկում երկաթե հիմնակմախքը:

Վահեն բարձրացրեց գլուխը, ծոծրակի մկանները լարվել էին: Աչքերի արագ թարթումով հեռացրեց սպիտակ մառախուղը, աղոտ պատկերը կամաց-կամաց պարզվեց: Գլուխն արագ թափահարեց: Չէ, նույնն է, ինչ եւ առաջին հայացքից. փոշոտ լամպ՝ ուղիղ իր գլխավերելում, ֆուտբոլի գնդակի չափի շրջանաձեւ լուսամուտ, հսկայական պահարան ձախ կողմում, կամ էլ հասարակ պատ...եւ ինքը՝ փափաթված սեւ, բրոյա ծածկոցով: Այդ ամենը հազիվ էր նշմարվում լույսի թույլ շողի ներքո, որ մեծ դժվարությամբ կարողացել էր ճանապարհ գտնել ներս թափանցելու համար: Անդրձիբիմյան սառնությունը շոշափեց մեջքը: Արյունը վազեց դեպի գլխուղեղը: “Սա նավախցիկի նման չէ: Աստված իմ, որտե՞ղ եմ ես”: Սիրտն ահաբեկված պոմպում էր արյունը: Վերջին հիշողությունը... պետք է գտնել այն...

Կապիտանի ծննդյան օրն էր, խմիչքից հրաժարվեց... չէ, դա մի քանի օր առաջ էր: Հա՛, Աթենքում տաքսի էր նստել, բայց տան հասցեն մոռացել էր: Բայց դա երազ չէ՞ր: “Մտածի՛ր, մտածի՛ր”: Ահա՛: Իր գլխացավի պատճառով մի փոքր հանգստանալու խորհուրդ ստացավ բուժքրոջից: Նավախցիկում տոթ էր: Հետո... հետո... ոչինչ, դատարկություն: Վերացել էր նավի սովորական դարձած օրորը, որն այդքան արագ քնեցրեց նրան: Իհարկե, եթե հաշվի չառնենք քնաբերի 2 հաբը, որ նա կուլ տվեց: Ա՛խ, իհարկե, երկու հաբ քնաբեր էլ կար: Վեր կացավ: Գլխապտույտն, իհարկե, հիշեցրեց իր մասին:

“Կտրուկ վեր չկենաս”, - կրկնեց Վահեն բուժքրոջ հերթական հորդորը: Փտահոտը փսխման մղում առաջացրեց: Շրջվեց: Դիմացը դուռ էր՝ ցածր, երկաթե դուռ: Նետվեց դեպի բռնակը: “Կողպված է”, - տազնապով մտածեց: “Սա ի՞նչ հիմար կատակ է”: Մի քանի անգամ թափահարեց, ապա ավելի ուժեղ: Անհուսորեն դեպի իրեն էր քաշում այն: Վահեն լավ ֆիզիկական պատրաստվածություն ուներ, բայց մետաղյա, ծանր դուռը... այն էլ կողպված... Բռունցքները բախեցին այն իրենց ողջ ուժով:

-Հե՛յ: Մարդ կա՞, - գոռաց Վահեն:

Ձայնն արձագանքեց միայն սեփական ուղեղում, իսկ շուրթերից խղճուկ ծվծվոց արձակվեց: Որեւէ մեկին կանչելու ընդունակ ձայնը բացակայում էր: Ինչքա՞ն ժամանակ է այստեղ պառկած, որ ցուրտն ու խոնավությունը հասցրել են վնասել ձայնալարերը եւ, խըմ-խըմ, երեւում է՝ նաեւ բրոնխները: Մոտեցավ լուսանցույցին: Ստիպված եղավ ծնկներով բարձրանալ պատուհանիկի դիմացի նստարանին եւ, քանի որ բավական բարձրահասակ էր, խոնարհել գլուխը: Ծովն էր, նույն ծովը, որ նաեւ նավախցից էր երեւում, բայց ամենեւին ոչ նույն դիտակետից: Ապակին մաքուր էր, երեւի թե հենց նոր ողողվել էր հզոր ալիքով, թեպետ եւ պատված էր աղի նստվածքի հաստ շերտով: Ծովն անհանգիստ էր ու մեկը մյուսի հետեւից փրփրոտ հորձանքներ էր մատուցում: Հերթական ալիքը ամբողջությամբ ծածկեց պատուհանը:

Վահեի մեջքի հետեւում ժանգոտած ձողերի միջից մի դուլյի չափ ջուր շումփաց: Վահեն մատներով լայնացրեց օձիքը: «Փարոսի է նման, բայց ի՞նչ եմ այստեղ կորցրել»: Նորից փորձեց գոռալ: Արդեն անհարմար էր զգում իր ճնշացող, ժանգոտ ձայնը լսելիս: Դռանն անդադար հարվածելը ոչնչի չհանգեցրեց՝ բացի ափերի թմրածությունից:

Դռան կողքին ցածրիկ պահարան էր: Դարակների բացվելը նմանվում էր ջութակն առաջին անգամ ձեռքը վերցնողի նվագելուն՝ ճրճ-ճրճ: Վաղուց յուղելու կարիք կար, բայց, ըստ երեւույթին, փարոսը կամ Աստծո կողմից մոռացված, շահագործումից դուրս եկած էր, կամ անպատասխանատու սեփականատիրոջ էր հանձնված: Դարակները լի էին լարերով: Էլի՛ լարեր: Առանց այդ էլ դրանց մի կույտը հենց նոր ոտք զցեց նրան: Սառած մատները ջղաձգորեն փնտրում էին որեւէ բան, ինքն էլ չգիտեր՝ թե ինչ, միայն ապավինում էր ձեռքերի՝ իրեն դժվար դրությունից դուրս հանելու ռեֆլեքսին: Տեսրեր: Թերթերի կեսը սպիտակ էին: Նշումներն արված են մատիտով եւ կարծես նվագագույնը կես դարի պատմություն ունեն: «Ռոբինզոն Կրուզոն» եւ «Խորհրդավոր կղզին» առաձևապես հույս ներշնչող չէին:

Միանգամից գլխի ես ընկնում, թե ինչ է զգում միայնակ պահապանը՝ այստեղ տաղտկալի օրերն անցկացնելիս:

Լսվեց ծովի ավելոծության աղմուկը: Առաստաղից ասես սառցի մի քանի կտոր ընկավ օձիքի տակ: Վահեն ցնցվեց: Աչքերն արդեն սովորել էին մթնշաղին եւ հեշտությամբ տարբերակում էին առարկաները՝ մատնոց, չափերիզ, կողմնացույց, էլեկտրաթափ եղած լապտեր, որ մյուս առարկաների հնությանը ոչ մի կերպ չէր համապատասխանում: Մյուս անկյունում անփութորեն խցկված էին հնամաշ լաթեր, մի քանի սպիտակ հար:

Վահեն ծոծրակը շոշափեց՝ հանգստացնելու համար կրկին գլուխ բարձրացրած ձգող ցավը: Մյուս դարակում հնության հոտը ներծծած եւ զարմանալիորեն կոկիկ արդուկված սպիտակեղեն էր, բինտի կտորներ, յոդ, բամբակ, սրվակներ, մի խոսքով՝ դեղատուփի հիշեցնող մի բան:

Շնչափողը սեղմվեց, Վահեն լսեց իր արտաշնչման սուլոցները: Ժանգը կերած արդուկ, մարզաքարեր, շախմատի տախտակ, փոքրիկ մարմարե արձան՝ կտորված ոտքով բալետի պարուհի: «Չի կարելի, միայն չհագաս, թե չէ նորից կսկսվի»: Զաշեց հսկայական պահարանի բռնակից: Երեք դռնակներից միայն այս մեկն էր բաց: Ոտքը սայթաքեց գետնից դուրս թռած տախտակների վրա, եւ նա

հետ շարտվեց: Դռնակը տանջված ծերունու պես հոգոց հասեց եւ բացվեց: Միջից արագ հոսքով դուրս թափվեցին... ԼԱՐԵՐԸ... Դրանք տապալեցին նրան: Դրանց արանքում ինչ-որ փայլուն իր աննշան լույսի ճառագայթ արտացոլեց: Վահեի ձեռքում հայտնվեց կոտրված, բայց սրությունը պահպանած դանակ: “Տեսնես կաշխատի”, - մտածեց:

Չգույշ քայլերը ցույց էին տալիս տարակուսանքի աստիճանը: Մոտեցավ դռանը: Դանակի շեղբի վերին կեսը չկար, բռնակի մի մասը՝ նույնպես, եւ շեղբը գրեթե ամբողջովին մերկացած էր: Ձեռքի մեջ պինդ բռնել էր փայտե կոթը:

Ծնկի իջավ, կողպեքի ձեռքից հայացք գցեց սենյակից դուրս: Բիբն իսկույն նեղացավ, նա աչքերը կկոցեց կտրող ցավից: Սենյակից դուրս գտնվող տարածքը լցված էր լույսով, եւ փոքրիկ անցքից Վահեի երեսը շոյում էր ծովի բուրմունքով օդի թարմ շիթը:

Դանակի շեղբը նույնիսկ չտեղավորվեց ձեռքի մեջ: Երկու մատով բռնեց սայրից եւ սկսեց տեղաշարժել այն, այս ու այն կողմ ճոճել: Նայեց շուրջը: Վեր կացավ: Աչքերը թափառում էին սենյակի շուրջ, գլխապտույտը դարձյալ շփոթեցնում էր նրան, երբ նա երկար պտտվում էր մի կետի շուրջ ինչ-որ կարեւոր մանրուք փնտրելիս:

Վահեն մատները սեղմեց քունքերին: Ոտքերը երերացին, եւ նա մի քանի քայլ հետ գնաց: Մանրահատակը զգվելի ճոռոց արձակեց: Վահեն կենտրոնացած նայեց փայտե տախտակներին: Ապա դանակին: Նորից տախտակներին: Ոտքով հրեց դրանք: Դանակի շեղբը տեղավորեց դուրս թռած տախտակներից մեկի տակ եւ ոտքով ուժեղ սեղմեց այն: Ձեռքով ինչքան ուժ ուներ քաշեց դանակի բռնակից: Եվս մի փորձ: Ահա: Իրականացավ: Ոչ այնքան այն, ինչ իրեն էր հարկավոր: Սայրը վերջնականապես ազատվեց կոթից: Հիմա ձեռքում սուր ծայրն էր միայն, անպիտան կտրող գործիք: Հարկավոր էր, որ այն մի-փոքր բարակի:

Մտովի Վահեն կրկին բացեց բոլոր դարակները, հայացքով շրջեց հաղորդալարերի արանքով եւ... այնքան ծանր իրեր կային այնտեղ, իսկ ի՞նչ էթե... Վահեն սուրաց դեպի ցածրիկ պահարանը: Ծանր, թուջե արդուկը... Վստահ չէր, որ կստացվի, բայց պարտավոր էր փորձել:

Այս հնամենի սենյակում ցանկացած բան թանգարանի ցուցանմունքի տպավորություն էր թողնում, անցյալի մատնահետք, այնքան փխրուն, որ թեթեւ դիպչելիս կարող է փշրվել... կամ էլ ուղղակի պոկվել, ջարդվել ու ընկնել ոտքիդ: Ծանր արդուկը գցեց դանակի մնացորդների վրա, ապա նորից, մի քիչ ավելի մեծ բարձրությունից եւ ավելի մեծ թափով: Սայրից անջատվեցին մի քանի բեկորներ: Դրանցից ամենաբարակը Վահեն փորձեց մտցնել փականքի անցքը: Սկսեց հերթով տեղը գցել բույթերը: Դրանք բանալու ատամիկների ձեւն են ընդունում, եւ երբ ի վերջո դրանց կտրվածքները հավասարվում են, գլանը հեշտությամբ պտտվում է: Բայց բույթերից մեկը հրաժարվում էր տեղից շարժվել:

“Ինչ-որ կերպ փակել են, չէ՞”, այս դուռը: Եթե հաջողվել է կողպել, կհաջողվի նաեւ բացել”, - հուսադրում էր ինքն իրեն: Մի քանի անգամ սայրը վրիպելուց հետո Վահեն ինչքան ուժ ուներ սեղմեց այն մետաղի կտորին: Սայրը սկրդելով մյուս կողմ շեղվեց, իսկ կողպեքից դուրս ցցված եւ Վահեի մատների մեջ ուժեղ

սեղմված ծայրը (ոչ պակաս սուր, քան մյուս կողմից) մխրճվեց ուղիղ ափի մեջ: Արյունը դուրս շփեց վերքից եւ կարմիր ներկեց կապիտանի օգնականի ճերմակ համազգեստի թեւքը:

Արտաշէնը անհնարին դարձավ: Օդը թոքերից չէր ելնում: Տաք արցունքները անմիջապէս հեղեցին այտերին: Աչքի առաջ հայտնվեց ծեծկռտուքի տեսարանը: Ամեն ինչ այնքան պարզ էր ու հստակ, կարծես երեկ պատահած լինէր, չնայած անցել է արդէն տասներեք տարի: Այդ բոլոր տարիների ընթացքում չի եղել գեթ մէկ օր, որ չհիշի այդ մի քանի ակնթարթը: Ամեն օր նույն ձայնապնակը պտտվում էր նվագարկիչի վրա: Եթէ եւ եղել են այդպիսի երջանիկ օրեր, երբ նա այդ մասին չէր մտածում... չնայած... չեն եղել այդպիսի օրեր: Նա միշտ զգում էր այդ պահի առկայությունն իր կյանքում:

Երբեմն փողոցում նրան պատահում էին կռվող դեռահասներ, եւ նա մինչ օրս շրջանցում էր նրանց՝ ձգտելով նրանց շուրջը երկու հարյուր մետր շառավղով սահմաններից դուրս մնալ: Մեկ էլ տեսար, նրանցից մեկն էլ իր մոտ սուր զենք կունենա եւ նույնքան հեշտ իր որովայնը կխորթի այն: Ինքն էր մեղավոր: Ինքը կանչեց հորը: Եթէ չկանչեր, ոչինչ չէր պատահի: Հայրն էլ շտապեց տղաներին բաժանել իրարից: Արդյունքում նրանցից մեկից էլ ստացավ “շնորհակալությունը”:

Հիշում էր արյունը, ալ կարմիր, շատրվանի պէս ցայտում էր այս ու այն կողմ ու ներծծվում հողի մեջ, սրտխառնոցը, թէ ինչպէս էր ստամոքսը դուրս ուրվում: Հիշում էր իր ձեռքերը՝ թաթախված հոր արյամբ, իր ճվղոցները, արցունքները՝ արյան հետ խառնվող, օգնության ապարդյուն կանչերը, իրեն կորցրած դէպի փողոց վազելը, երբ ոտքերը թէթել էին փետուրի պէս: Հիշում էր, թէ ինչպէս էր ստիպված ներարկումների ժամանակ փակել աչքերը, զուգարան վազել, երբ եղբոր առաջին կաթնատամն ընկավ: Նրա մոտակայքում սարսափ ֆիլմեր չէին նայում, ոչինչ չէին կտրտում: Շրջապատում ոչ մեկից չէր լսում “Տղա ես, չէ՛: Արյունի՛ց ես վախենում”: Բոլորն էլ գիտեին պատճառը:

Վահէն զգաց, թէ ինչպէս է օդը գնալով քչանում, նրան թվում էր, թէ վակուումում է գտնվում: Կրծքավանդակը փքվել էր տակառի պէս: Վահէն ձեռքերով հենվեց ծնկներին՝ արնոտելով սպիտակ տաբատը: Դաստակների երակները ուռել էին լարվածությունից: Անզգայացած ձեռքով շոշափեց դատարկ ձախ գրպանը, ապա արնաշաղախ ձեռքը տարավ դէպի մյուսն ու հանեց իր փրկության վերջին հույսը՝ ներշնչակը: Մոտեցրեց այն շուրթերին ու մի քանի անգամ սեղմեց: Ինչքան հաճելի էր նորից թէթել շնչելը: Աչքերի առջեւ ամեն ինչ դեռ լողում էր արցունքների մեջ, բայց պետք էր մշակել վերքը:

“Դէ ինչ, այս հարցում, իհարկէ, բախտս բերել է”,- մտածում էր նա՝ դարակից վերցրած յողը ափին լցնելիս: Բիւտը մի քանի անգամ փաթաթեց վերքի շուրջ, արյունը թափանցում էր միջով, Վահէն ավելացնում էր շերտը շերտի հետեւից, որպէսզի կարմիրի մի բիծ էլ չտեսնի: Բշտեց վերնաշապիկի թեւքերը: Ներշնչակը տեղավորեց գրպանում: Սովորաբար դրանք ամենուր էին՝ տան պահարանում, գրպանում, դպրոցական պայուսակում, նավախցիկում էլ մի քանիսը կային, եթէ հանկարծ գրպանինը վերջանար:

Ուր թարեկանում պարզվեց, որ այն պիտի իր հետ լինի օրը քսանչորս ժամ, տարվա մեջ 365 օր (կամ 366), ամբողջ կյանքի ընթացքում: Սկզբում դժվար էր

հարմարվելը: Մայրը հարյուրերորդ անգամ խռատաձայնով բարկանում էր վրան, եթե նա տնից դուրս էր գալիս առանց դրա: “Գուցե այն բերանի՞ս կարես: Ես չեմ ուզում սրա ստրուկը դառնալ”, - զայրանում էր նա ի պատասխան: Բայց մահացու հեռանկարը ստիպեց նրան ըմբռնողաբար մոտենալ այդ հարցին:

Պատի կողմից շրշոցներ լսվեցին: Ինչ-որ բան շրջում էր պատի ճաքճքած ներկի տակ: Ծածկույթի մի քանի կտոր թափվեցին գետնին: Վահեն վերցրեց պատին հենված տախտակները եւ մի կողմ շարտեց: Դրանց հետեւում՝ պլոկված ներկի, բորբոսնած խոնավ պատերի միջով ներս ու դուրս էին անում լիքը հազարոտուկներ: Բայց ամենակարեւորն այն էր, որ պատի մեջ հայտնաբերվեց փոքր անցք: Դրա միջով կարելի էր տեսնել, թե ինչպես է փարոսի հարթակներից մեկի բաց դռնից ներհոսում ջուրն ու հետ քաշվում դեպի ծովը: Երբեմն ալիքները շատ ուժգին էին, եւ ջուրը թափանցում էր Վահեի սենյակը, ներս լցվելով ճեղքից, եւ տղայի ձկներն ամբողջությամբ թաց էին: Ալիքներից մեկը նրա համար անակնկալ բերեց:

“Յեռախո՞ւս”: Ձեռքը հագիվ էր խցկվում ճեղքի միջից: Մաշկն ու մկանները ոսկրերին էին կպել, եւ ուր որ է պիտի լսվեր դրանց ճռթոցը, բայց Վահեն շարունակում էր մատների ծայրերը ձգել դեպի հեռախոսը: Մի քանի ակնթարթից այն կանհետանար ջրի հետ միասին, եւ Աստված գիտի, կվերադառնա՞ր նորից, թե՞ ոչ: “Մի քիչ էլ ու կհասնես”: Ահա եղունգն արդեն դիպչում է ստեղներին: Թվում էր, թե բոլոր կապանները պատռվել են: Ուներն անտանելի ցավում էին, բայց մյուս ծայրից ձեռքն արդեն ոչինչ չէր զգում: Մեխանիկորեն բռնեց հեռախոսն ու պինդ սեղմեց ձեռքի մեջ: Չգուշուղյամբ, որ հանկարծ չգցի այն, Վահեն դեպի իրեն քաշեց անզգայացած ձեռքն ու թափ տվեց հեռախոսը: Զանդեց այն, բաժանեց մասերի: Պահարանից վերցրեց սպիտակեղենը, չորացրեց հեռախոսը, կրկին հավաքեց այն: “Փառք այս դիմացկուն հնադարյա Նոկիայի ստեղծողին”, - մտածեց: Յեռախոսը միացավ:

Այս իրը ապացույցն էր այն բանի, որ այստեղ մեկը եղել է: Յեռախոսի հին մոդել է, բայց հասկանալի է՝ այստեղ մոռացված կամ, ով գիտի, դիտավորյալ զցված է ոչ շատ վաղուց: Գուցե սա ինչ-որ ծուղա՞կ է: Ո՞վ է հիմա այսպիսի հեռախոսներ օգտագործում: Ամեն ինչ շատ տարօրինակ էր: “Լավ: Դա քիչ հավանական է, բայց գուցե կարելի է մի պահ եզրակացնել, որ սա առեւանգում է: Ու՞մ եմ ես պետք: Ինչի՞ համար: Ոչինչ չեմ հասկանում”:

Հավանաբար պատասխանները նրան սպասում էին հեռախոսի Էկրանից այն կողմ: Շտապեց զանգահարել հարազատներից մեկին: Ասել, որ չգիտի, թե որտեղ է: Մի քանի համար պտտվում էին մտքում, բայց ամեն հերթական զանգից հետո լսվող արտահայտությունը արդեն զգվեցրել էր նրան: “Բաժանորդը ժամանակավորապես”... Յեռախոսը նետվեց հանդիպակաց պատին: “Ողջ աշխարհն է անհասանելի:

Իսկ ի՞նչ, եթե ես մահանամ, այստեղ հրդեհ բռնկվի, ինձ փորձեն քառատել, ո՞ւմ պիտի զանգեմ, ու՞մ օգնության վրա պիտի հույս դնեմ: Իմ ամենավատ մղձավանջում էլ նման բան տեղի չէր ունեցել հետս”: Վահեն հիշեց իր մղձավանջները: Ինքն է՝ կանգնած բանավիճող դեռահասների արանքում: Նրանք գոռում են իրար վրա, եւ պարզ է դառնում, որ այս ամենը լավ չի վերջանա: Վահեի վրա նրանք ուշադրություն չեն դարձնում, բայց որքան ավելի են բղավում, այնքան

ավելի են բարձրանում, իսկ Վահեին կուլ են տալիս սորուն ավազները: Տղաներից մեկը թափ է հավաքում, բռունցքը տանում գլխի հետեւը, եւ Վահեն արթնանում է ծոծրակի ուժեղ ցավից: Ինչպես այսօր:

Գլխացավը, ինչպես եւ քաղաքացիական նավատորմի գլխարկը, այսպես ասած՝ տղայի գլխից անպակաս էին: Ծրջապատում բոլորի համար դրա պարզ բացատրությունը կար՝ ասթմայի ախտանիշներից մեկն է: Բայց Վահեն հասցրել էր ինքն իրեն խորապես ճանաչել եւ հասկանալ, որ պատճառը միայն իր մտատանջումների՝ գանգատուկի վրա գործադրած ճնշումն էր: Մտքերը շատ էին ու թափառում էին ուղեղի մի անկյունից մյուսը: Դրանք անհանգիստ մտքեր էին, իսկ այդպիսիներին ազատություն է պետք, ինչպես եւ իրեն հենց հիմա: Նրանց անհրաժեշտ է դուրս թողնել, իսկ Վահեն նրանց մասին ոչ ոքի չէր պատմում, ու դրանից նրանք էլ ավելի էին ըմբոստանում եւ ներսից կրծում գանգի ոսկրերը: Այստեղից էլ գլխացավը: Ամեն ինչ պարզ էր, ինչպես երկու անգամ երկուսը, ամեն ինչ, բացի խնդրի լուծումից: Չէր կարելի թույլատրել՝ որեւէ մեկն իմանա, որ ինքը կրում է այդ ամենն իր ներսում:

Փորփրեց հեռախոսահամարները: Մտքում շարադրեց, թե ինչ պիտի ասի, եթե հանկարծ լսափողի մյուս կողմում կենդանի էակ հայտնվի: Ամենասարսափելին այն էր, որ դժվար թե կարողանար պարզորոշ ինչեցնել մտածածը: Այսքան գանգերը իզուր էին. նրա ճվճվոցից դժվար թե որեւէ մեկը մի բան հասկանար: Առաջին եւ գրեթե միակ համարը գրանցված էր «Մարկո»: «Իսկ ի՞նչ եթե նրանք հենց դրան են սպասում, թե երբ կգրես այս բաժանորդին»: «Բայց դա արքունի է»: «Իսկ այն, որ ես հայտնվել եմ չգիտես թե ուր, չգիտես թե ինչու, չգիտես թե ինչպես, արքունի չէ»: «Իսկ դու ուրիշ մտահղացում ունե՞ս»: «Իսկ գուցե դադարե՞ս ինքդ քեզ հետ խոսել»:

Վահեն մատներն անցկացրեց մազերի միջով: Գլխարկը վրան չէր եւ սովորականի պես չընկավ գետնին: Պատուհանից երեւում էին երկնքից կառչած ծանր ամպերը, որ հիշեցնում էին մոխրագույնով վրձնահարվածներ: Արեգակը մի քանի շառավիղներ էր զգել ծովի մակերեսին: Բայց սպիտակ, թափանցիկ շղարշի միջով դեռ երեւում էր ծովի ցատումը: «Այսպես երկար չենք ձգի», - ասաց նա ինքն իրեն եւ գրեց առաջին հաղորդագրությունը:

"Բարեւ Ձեզ: Ինձ օգնություն է հարկավոր: Այս հեռախոսն ինձ մոտ է հայտնվել: Ես չգիտեմ, թե որտեղ է ձեր ծանոթը՝ այս հեռախոսի տերը, եւ նույնիսկ չգիտեմ, թե ինքս որտեղ եմ: Ես "Տոպիո" նավում էի, այն ուղեւորվում էր Ալեքսանդրիայից Սալոնիկ: Բայց հիմա ինձ համար անձանոթ վայրում եմ: Եթե հնարավոր է, տեղյակ պահեք փրկարար ծառայությանը, քանի որ ես չեմ կարող գանգահարել նրանց":

Վահեն իրար հետեւից հազիվ էր շարում տառերը: Նման հեռախոս նա ունեցել էր մոտ տասը տարի առաջ եւ հասցրել էր մոռացության մատնել այն դժոխային տանջանքները, երբ ստեղծը ստիպված ես սեղմել այնքան, մինչեւ անհրաժեշտ տառին հասնես: Ընդ որում, արգելված է նյարդայնանալ, կա հավանականություն, որ կարող ես բաց թողնել փնտրածդ տառը: Նա հույս ուներ, որ անձանոթը կպատասխանի, բայց անզորության զգացումը հանգիստ չէր տալիս իրեն: Զեռախոսը դադարեց:

“Ես էլ եմ փակւ տակ”

“Ի՞նչ է կատարվում”

Փոքրիկ լուսամուտը թխկթխկում էր քամու կատաղի հարձակումներից: Բնության տարրերն իրար հետ մարտնչում էին. օդը ջրի դեմ, բնությունը՝ մարդու, ինքը՝ անազատության: Վիթխարի ծփանքները փշրվում էին աներեր ժայռերին եւ վերածվում սպիտակ փոշու: Վերադառնալով դեպի մայր ծովը՝ ավելի մեծ թափով վեր էին խոյանում եւ կրկին նետվում քարերին: Գորշ հորիզոնում անհարթ ծայրերով՝ ասես մենամարտում գազանն էր կրծել, ամպերը տեղատարափ անձրեւ էին խոստանում:

“Սպիտ քաղաքում համաճրակե”

Համաճարա՞կ: Եվ ինչն ավելի էր մոլորության մեջ գցում՝ Սպի՞տ: Խորվա՞թիա:

"ԽՈՐՎԱԹԻԱ, ինչպե՞ս",- մտածեց նա եւ կպավ գրուցակցին հաջորդ հաղորդագրությունը գրելուն:

"Կարծում եք, ես խորվաթիայում եմ"

Քնած ժամանակ ինչ ասես կարող է լինել. պետություն կազմալուծվել, հեղափոխություն լինել, Մարտի վրա կյանք հայտնաբերվել: Բայց որ ինքը հայտնվի խորվաթիայում, դա արդեն բոլոր սահմաններն անցնում է:

"Երեւի դուք էլ եք վարակված"

"Երեւի ԴՈՒՔ ԷԼ"... այսինքն...

"Դուք վարակվա՞ծ եք"

Տեսնես՝ քանի՞ ժամ է անցել կամ քանի՞ օր: Ումի՞ց կարող էր վարակվել, որտե՞ղ են "Տոպիոյի" ուղեւորները: Որտե՞ղ է կապիտանը, տեղյա՞կ է այն մասին, որ ինքը վարակված է: Հասցրե՞լ է արդյոք վարակել մյուսներին: Ուհիյամը... Նրանք միասին են ճաշել: Իսկ ի՞նչ, եթե նա էլ է հիվանդացել: Եթե հիվանդացել է, ապա ու՞ր է: Ո՞վ է բերել իրեն այստեղ: Ինչո՞ւ հիվանդներին ոչ մի օգնություն չի ցուցաբերվում...

Մարտի 9, ժամը 19:01

Կղզյակից ոչ հեռու ծովը ճեղքած նավն էր կանգ առել եւ իր վրա էր ընդունում այիքների գայրույթը: Նավակները մոտենում էին ափին:  
- Ի՞նչ է պատահել, ինչի՞ համար է սա: Մենք վարակի գոտուց չենք ժամանել,- գոռաց կապիտանը, բայց քամու պոռթկումները իսկույն դեպի ջուրը քշեցին նրա ձայնը:  
- Բարեւ ձեզ,- փարոսի կողմից դեպի ափն իջնելով խոսեց մեկը,- ես տարիանման պատասխանատուն եմ: Անունս Ֆիլիպ է:

- Մենք ազդանշան ենք ուղարկել: Եղանակն ահավոր է: Նման բան առաջին անգամ է պատահում: Քամին ահավոր սանձարձակ է:
- Ստացել ենք ձեր ազդանշանը: Բայց սպասելու համար լավ տեղ չեք ընտրել:
- Եթե իմ ընտրությունք լիներ, ես Հունաստան կհասնեի:
- Ինչպես տեսնում եք՝ մեզ մոտ էլ ամեն ինչ կարգին չի: Համաճարակ է բռնկվել: Սպլիտից ու հարակից շրջաններից բոլորին Եվակուացիայի ենք ենթարկում:
- Բախտիս անիվն ո՞վ շուռ տվեց: Այսինքն՝ չեմ կարող այստեղ սպասել, մինչեւ եղանակը հանդարտվի:
- Ցավոք:
- Ֆիլիպի երեսը չէր երեւում, բայց նավապետը զգաց, թե ինչպես է նա խոժոռում դեմքը: Ցուցամատը երկնքին պարզեց: Երկնականարում մռայլ ամպերն ուր որ է պիտի պատռվեին: - Շուտով անձրեւ կտեղա: Փարոսի ներսում ձեզ համար համազգեստ ենք պատրաստել: Մի քիչ էլ ցամաքով կճանապարհորդեք: Անվտանգ մի վայր կգտնեն ձեզ համար:
- Նավն էլ պիտի այստեղ մնա, հա՛:
- Որոշ ժամանակով: Մինչեւ վիճակը բարելավվի:
- Կապիտանը ձեռքով նշան արեց ավի հասած նավակներին, որ բարձրանան փարոսը: Ֆիլիպը մի պահ շրջվեց.
- Արագ փոխվեք, ձեր թաց շորերը զցեք, քանի դեռ անձրեւը չի սկսվել:
- Պարո՞ն կապիտան, պարո՞ն կապիտան,- կանչեց նավակից մի երիտասարդ:
- Ասա, Ուիլյամ:
- Կօզնե՞ք՝ Վահեին հանենք նավակից:
- Ուիլյամը նավակից դուրս էր քաշում սեւ վերմակով փաթաթված, բարձրահասակ տղայի:
- Չաքարյանի՞ն ինչ է եղել:
- Քնած է, պարոն կապիտան: Չկարողացանք արթնացնել:
- Չհասկացա,- թավ ձայնով բարկացավ նավապետը:
- Վատ էր զգում իրեն: Երեւի էլի քնաբեր է խմել: Կապիտանն ուսերից էր բռնել, Ուիլյամն էլ ոտքերից:
- Դու վերադարձիր նավը, այնտեղ մի երկուսին էլ եմ ուղարկել, ստուգեք բոլոր նավախուցերը,- հրամայեց կապիտանը,- նավը տակնուվրա արեք, տեսեք՝ մարդ կա՞ էլի այսպես քնով անցած:

Մարտի 10, ժամը 17:45

Վահեն զգաց, թե ուղեղի խորքից ակոսների ու գալարների տակ թաքնված ցավն ինչպես է դուրս տեսչում եւ շաղափում ծոծրակը: Ափերը խուտուտ տվեց հեռախոսի հերթական խուլ գվվոցը.

"Ամբբողջ մարնովս Հոսանքէ անցնում: ոնց որմաշկիս տակ լարերիլնեն"

Մի քանի րոպե անց դարձյալ լսվեց հաղորդագրության ազդանշանը.

"Դա զգայական հայրցիկացիաներեն:: շտապ օգնություն չկ,ա ընդհանրապես ոչոք չկա"

"Ի՞նչ է կատարվում այս մարդու հետ",- մտածեց Վահեն եւ ականա ձեռքը տարավ մեջքին. ողնաշարի աջ եւ ձախ կողմերով թեթեւակի ծակծկոցներ անցան:

"Ինչու՞ ոչ ոք չկա"

"Եվակուացիա"

Վահեն դժվարությամբ կուլ տվեց կոկորդին կպած քարը: Կրծքավանդակի խորքում նորից խզզոցներ ծագեցին:

"Ի՞նչ համաճարակ է"

"IMMENS վիրուս"

"Դե եկ, փորձիր հասկանալ, ճի՞շտ է գրել, թե՞ Էլի իր ոճի մեջ", - մտածեց: Ինչեւէ, դա հիմա նրան ամենավերջին հերթին պիտի հետաքրքրեր: Ավելի Էական նշանակություն ուներ այն, թե...

"Ի՞նչ է լինում վիրուսի ժամանակ"

Վահեն շոշափեց ճակատը, պարանոցը, սակայն ձեռքերը սառն էին մարմարի պես: Խուճապահար շտապեց հայելային մակերեւույթ փնտրել եւ ուսումնասիրել իրեն ոտքից գլուխ: Ջուրը հատակին արդեն հաստ շերտ էր կազմել: "Եթե դեռ հիվանդ չեմ, անպայման կհիվանդանամ այստեղ", - հեգնեց՝ տամկացած կոշիկներն ու գուլպաները հանելով:

"Ձերմությունն հլիսացավ մարդն արգելակվում է հալյուցինցիաներ է ունենում: յարդն ու փայծաղը մեծանումեն : արնահոսող ցան: հիմնական վտանգըալերգիան է"

Վահեն որոշեց խոսակցի կեղծանունը "բժիշկ" դնել: Արնահոսող ցան նա չէր նկատել եւ ոչ էլ ցնորքներ, եթե իհարկե այս ամենն ինքնին մի մեծ ցնորք չէ: Գլխացավ, ալերգիա... դրա՞նց պատճառով են իրեն այստեղ պահում:

"Ձեզ որտե՞ղ են մեկուսացրել", - գրեց:

Խիղճը չէր ների նրան, եթե թողներ այս որոշ առումով անօգուտ գրույցը: Անհրաժեշտ էր իմանալ՝ ինչպես է Մարկոն, որտեղ է: Վարակվածն էլ օգնության ոչ պակաս կարիք ուներ, եւ միակ մարդը, ում նա կարող էր պատմել իր վիճակի մասին, ինքն էր: Եվ Վահեն շատ լավ գիտեր այդ մասին:

"Մարկո"

Բաժանորդից պատասխան չկար: Վահեն սկսեց քայլերով չափել սենյակը, ոտքերով ջուրը ճողփելով: Մթնում էր: Հեռվում ծովից վեր ձգվող ժայռերը քարե վիշապների էին նման: Լուսանցույցից արհավիրքի հոտն էր փչում:

"Լավ չե՞ք զգում"

Դարձյալ անպատասխան մնացած տառակույտ էր դա: Վահեն կրծոտում էր եղունգները, մատներով հարվածում շուրթերին եւ տենդորեն որեւէ ելք փնտրում:

"Ես կգանգամ նրան: Չեմ խոսի: Ուղղակի կգանգամ: Թող զարթնի, հո շունչը չի՞ փչել: Թե՞"...

Տղան տարուբերեց գլուխը՝ հոռի մտքերը թափ տալով միջից, եւ սեղմեց գանգի կոճակը: Ականջներին հասավ թույլ մեղեդի: Կարծես ձայնի աղբյուրը փաթաթված էր հազար շորով, փակված մի քանի տուփում եւ զցված օվկիանոսի հատակին: Հնչող երաժշտության ուղղությամբ շարժվելով՝ նա հայտնվեց հսկայական պահարանի առջեւ: Եվս մեկ անգամ բաց արեց մեջտեղի դռնակը: Ոչինչ չէր փոխվել: Կողքի երկու դռնակները կողպված էին, բայց մի՞թե...

Վահեն սարսափով հետ քայլեց: Ականջը մոտեցրեց փակ դարակներին: "Չե... դժվար թե... Դժվար թե այստեղ մեկը լինի": Կապիտանի կրտսեր օգնականը արթնացել է՝ փարոսի սենյակներից մեկում բանտարկված: Չարմացած կլինե՞ր արդյոք, եթե բացեր պահարանն ու տեսներ այնտեղ իրեն նամակագրող "բժշկին": Չգիտեր: Շրջանցեց պահարանը: Մեղեդին ավելի մոտիկից հավեց ականջախեցիներին: Առանց նայելու շոշափեց անջատման կոճակը: Ուղեղում զրնգաց մեռյալ լռությունը: Եկրանի կապտավուն լույսն ուղղեց պահարանի հետեւը: Դռան բռնակ էր ցցված պատից: "Այստեղ էլի դուռ կա":

Մարմնի ողջ ծանրությամբ հենվեց պահարանին ու հրեց ինչքան ուժ ուներ: Բնականաբար, այն մի միլիմետր էլ տեղից չշարժվեց: "Ի՞նչ անել, ի՞նչ անել...": ԼԱՐԵՐԸ: Վերցրեց դրանցից մեկն ու, պահարանի հետեւով զցելով, եզրը կապեց ու օղապարանի տեսք տվեց: Մյուս ծայրից պինդ բռնեց ու հերթով ձեռքերը փոխելով մոտեցրեց ծանրաքաշ հսկային: Այն դղրոյունով փուլ եկավ ջուրը՝ թիկնային մասից փոշու քուլաներ բարձրացնելով: Վահեն ափով փակեց քիթն ու բերանը եւ սկսեց ուսումնասիրել դռան հետեւի սենյակը: Թարթիչների միջով փոշին լցվում էր աչքերի մեջ, բայց երբ այն դանդաղորեն նստեց, Վահենի ծնկները ծավեցին: Արյունը հոսում էր հիվանդի մաշկից, վերածվելով առվակների, պատելով նրան այնպիսի պատնեշով, որին Վահեն դիպչել չէր համարձակվի: Մարմինը լարված էր, իսկ մաշկը գորշ գույներով շողջողում էր լամպի դեղնավուն լույսի ներքո: Ձեռքում հեռախոսն էր, մատները ստեղնաշարին հաղորդագրությունը հավաքելիս կանգ էին առել ու ցնցվում էին, ինչպես շարժիչը միացրած ավտոմեքենայի խլացուցիչը: Աչքերը փակ էին, բայց մազերի երկար մի փունջ թռչկոտում էր երեսին: "Շնչում է",- հասկացավ Վահեն:

-Պարո՞ն Մարկո:

-Ըհը՛, - դժվարությամբ արտաբերեց տղամարդը: Աստիճանաբար մարմինը ջղաձգումից ազատվեց ու թուլացավ: Հիվանդը գլուխը թեքեց տղայի կողմն ու աչքերը քառակուսի դարձան: Տանջող հազը դուրս էր պոծել տղայի թոքերից: Չգում էր, թե խորիսն ինչպես է խտացել ներսում:

-Գնա, գնա այստեղից:

-Այսի՞նքն,- հարցրեց զարմացած, փորձելով կարգավորել շնչառությունը:

-Ասթմատիկ ես, չէ՞: Զեզ այստեղ չի կարելի մնալ: Այս հիվանդությունը... իմ մարմնից հիմա այլերգեններ են արտադրվում: Դու կարող ես մեռնել: Վահեն գրպանից հանեց ներշնչակը, մի քանի անգամ փչեց: Ոչ մի միլիլիտր դեղանյութ չկար մեջը: Լրիվ դատարկ էր: Վախից անզգայացած մատներով այն գրպանը դրեց:

- Յո՛ւ, ավելի լավ ես հիմա:
- Այո,- կամաց ասաց նա:
- Միեւնույնն է, լավ կանես ոտքերդ առած փախչես:
- Իսկ ձեզ ո՞վ պիտի օգնի,- նա հենց նոր նկատեց, որ ձայնն այլևս նման չէ ծվծվոցի: Իր ձայնն է, իր իսկական ձայնը:
- Դու ինձ չես կարող օգնել: Գնա:
- Բայց ինչո՞ւ:
- Որովհետեւ նա էլ էր փորձում,- հիվանդը դողացող ձեռքը տարավ դեպի սենյակի անկյունը: Այնտեղ անշարժ մարմին էր կուչ եկել: Վահեն հիշեց վերջին կերածը: Բաղն ասես չի էլ անհանգստացրել նրան:
- Ի-ի՞նչ է պատահել ն-նրան:
- Գնա, քանի դեռ ուշ չի: Փակիր այս դուռը:
- Ես չեմ կարող դուրս գալ այստեղից: Գրեցի, չէ՛: Տառապյալը հոնքերն իրար մոտեցրեց եւ նայեց հեռախոսին: Ապա հայացքը սահուն վերադարձավ:
- Այո, այդ ես էի ձեզ գրում: Տղամարդը հոգոց հանեց.
- Կինս է: Եկել էր... մտածում էր, թե կարող է օգնել... իհարկե չէր կարող...,- նրա դեմքի տանջահար արտահայտությունը ընդգծում էր քունքի վրայով ծորող արյան կաթիլը:

Վահեն սեղմեց բռունցքները: Թիկունքից վրա տվեց ջրի այիքը: Տղան արագ պտտվեց: Ջուրն արագ լցվում էր սենյակն ու օրորվում իր սեփական թափից: Վահեն ոտքերը քարշ տվեց դեպի հիվանդը, նրան պետք էր սեղանին բարձրացնել, որովհետեւ ջրի մակարդակն արդեն բավական բարձրացել էր նրան ամբողջովին սուզելու համար:

- Չդիպչե՛ս,- հրամայեց Մարկոն՝ նկատելով Վահեի ձեռքի վիրակապերը:
- Ի՞նչ:
- Կվարակվես: Վիրուսն արյամբ է փոխանցվում:
- Վահեն փորձեց առողջ ձեռքով գրկել հիվանդի ուսերն ու բարձրացնել նրան:
- Կարո՞ղ եք մի քիչ այստեղ հենված մնալ: Ես կփորձեմ մի հնար գտնել դուրս գալու:

Հետ լողաց դեպի առաջին սենյակը: Նույն անցքից, որով ջուրը նրան հեռախոս էր ընծայել, հիմա ջրի բարակ թելիկներ էին թափվում: Նայեց սենյակից դուրս: Միջանցքում նույնպես մուլ էր: Դեպի հարթակ տանող դուռը փակվել էր: Ներս էր թողել ծովի հզոր մի այիք ու պինդ փակվել, չթողնելով, որ այն դուրս հոսի: Աչքերը մթի մեջ կկոցելով, հեռախոսի նվաղ լույսով փայլ գցելով այլակների վրա՝ Վահեն ջանք էր գործադրում, որ գտներ դանակը: Հաջորդիվ ամեն ինչ այնպես էր, ինչպես մշուշում: Կուրորեն, հույսը դնելով միայն ճակատագրի գթասրտության վրա, շոշափեց այն: Անհնազանդ գամը վերջապես տեղի տվեց, ջուրը բոսորեց, բայց բարեբախտաբար սենյակում մուլ էր, ինչպես Մարիանյան իջվածքում: Ջրի ճնշման տակ նրանք դուրս թռան սենյակից: Մարկոն ձեռքերում Վահեն սլանում էր պարուրածեւ աստիճաններով, բայց առաջացած գլխապտույտն էլ չէր հիշում: Մառախլապատ գիտակցությունը ձեռքերը լվացել էր այս գործից: Չգալու ունակությունը վերադարձավ միայն այն ժամանակ, երբ վազում էր դեպի հորիզոնը՝ ազահորեն շնչելով: Կոզակի շուրջ ծովը շարունակում էր սպանվել՝ ժայռերին խփվելով: "Չեմ կարող լողալով հասել": Վահեն շրջվեց: Մարկոն պառկած էր մանր քարերին եւ տանջվում էր

դողերոցքից: Գրկեց ցնցվող մարմինը: Կրճտացող ատամների արանքից հիվանդը փորձում էր հասկացվող բառեր արտաբերել:

- Վա... վա...
- Կվարակվեմ: Գիտեմ:
- Վառ-ռիր փ...փարոս-սի լ-լույսը:

Թեև ջուրը բաց դռնից դուրս էր հոսել, պարուրածել աստիճանները դեռ սլկուն էին: Բարձրացավ մինչև 5-րդ հարկը: Սանդուղքը գնալով նեղանում էր, բայց ոտքերն այլևս չէին սայթաքում: Այստեղ ջուրը չէր հասել, ու հատակը չոր էր: "Բժշկին" զգուշ նստեցրեց դռան կողքին ու բարձրացավ ելարանով: Փարոսի ամբողջովին ապակեպատ սենյակում հսկայական լամպ էր, ավելի ճիշտ՝ լամպը փոքրիկ էր, բայց այն շրջապատված էր տասնյակ ոսպնյակներով, որոնք բազմապատկում էին լամպի լույսը: Էլեկտրական մեխանիզմը գործի զցեց այնպես, որ լամպը 3 կարճ, 3 երկար, ապա կրկին 3 կարճ լուսարձակում կատարի: Հույս ունեին Մորգեի այբուբենով հասկացնել, որ իրենց օգնություն է ահրաժեշտ: SOS ազդանշանն էր: "Փրկեք մեր հոգիները, մարմիններս էլ հետը",- ուժասպառ շշնջաց տղան: Ինքն էլ տեղավորվեց պատշգամբի հատակին՝ ծնկները գրկած: Մարկոյին ու Վահեին ընդամենը մի պատ էր բաժանում:

- Դեռ այստե՞ղ ես,- լսվեց սառը աղյուսներից այն կողմ:
- Օհո, արդեն լա՛վ էք:
- Քանի դեռ հերթական նոպան չի սկսվել, բավական լավ եմ, որ անհանգստանամ քեզ համար:
- Ես լավ եմ:
- Չե՞ս վախենում:
- Դեղամիջոց ունեմ:
- Տես՝ գրպանու՞մդ է:
- Հա, արդեն ձեռքիս մեջ է:
- Ներշնչակո՞ վայր է ընկել ափին: Ես արդեն հասկացա, որ այն դատարկ է:
- Ավելի լավ է՝ մի քիչ պատմեք ինձ այս փարոսի մասին:
- Դե հին է, չի գործում: Բայց միայն իմանաս, թե ինչքան զբոսաշրջիկներ են երագում այն տեսնելու մասին: Մարդկանց գրավում է: Նրանց համար այստեղ գիտաշրջություններ են անցկացնում, թույլ են տալիս, որ վառեն լույսը կարճ ժամանակով: Բայց արդեն սկսել է փլատակների վերածվել: Որոշ ժամանակով փակել են, որ վերանորոգեն, մի քիչ տեսքի բերեն:
- Պարզ է...

Մարտի 9, ժամը 21:20

- Իվան, պրոֆեսորին բերե՞լ էք:
  - Արդեն ներսում է:
- Ֆիլիպը քայլերն ուղղեց դեպի փարոսի մուտքը: Սովոր էր ամեն ինչում սեփական աչքով համոզվել: Դատարկ կղզուց հայացք զցեց անմարդաբնակ Սալիտին: Գոլորշապատ ակնոցների միջից քաղաքը մառախուղում դարանակալած ուրվականի էր նմանվում: Գիշերվան կուլ գնացած պահեստանոցը չորրորդ հարկում էր: "Լապտերս ու՞ր կորավ",- մռթմռթաց Ֆիլիպը՝ գոտկատեղն ափահարելով, երբ հանկարծ թեթև հագի ձայն լսեց: Անկյունում պառկած էր մուգ սավանով փաթաթված մարմին: "Պարզ է, պրոֆեսորն այստեղ է, իսկ դո՞ւռը: Ոչ

ոքի վրա հույս դնել չի կարելի: Եթե ուզում ես մի բան լավ անել, ինքդ արա":  
Ֆիլիպը հետեւից կողպեց ցածրիկ դուռն ու բանալին գրպանը խոթեց:

Մարտի 10, ժամը 23:35

-Անունդ ի՞նչ է,- հնչեց ձայնը լուսաշտարակի ներսից:

-Վահե:

-Ի՞նչ ազգություն ունես, անունդ տարօրինակ է:

-Հայ եմ:

-Ա՛խ, հայ ես: Մի քանի հայ ծանոթներ ունեմ: Որտեղ էլ գնան, առաջին հերթին ազգությամբ են ներկայանում, հետո նոր անունով,- ծիծաղեց Մարկոն,- հայերը շախմատ սիրում են, չէ՞:

- Խաղա՞նք: Չինվորը B2-ից B4:

- Մտովի՞: Չէ, այդպես չեմ կարող:

- Իսկ ես խաղում էի հորս հետ:

- Բա ինչու՞ էիք առանց խաղատախտակի խաղում:

- Գիշերներով էի խաղում: Այդ ժամանակ ոչ խաղատախտակ կար, ոչ էլ արդեն հայրս... Սենյակում ճնշող լռություն տիրեց:

- Ես էլ եմ եղել Հայաստանում, կնոջս հետ... հեռախոսն էլ էր կնոջինս,- Մարկոն աչքերը խոնարհեց,- Ռաքել... Միայն նա էր հավատում: Ու իմ պատճառով...

Վահեն լսեց լռության մեջ թաքնվել ցանկացող հեծկտոցներ: Ապա Մարկոն շարունակեց դողացող ձայնով.

- Գուցե դու ինձ սպանես ասածիս համար, բայց եթե այսպես, թե այնպես մեռնելու եմ, ուզում եմ, որ իմանաս: Ես եմ այս ամեն ինչում մեղավոր: Ես ու, որոշ չափով, նաեւ պնդաճակատ հանրությունը:

- Ի՞նչ է ձեր մեղքը:

- Ես աշխատում եմ մոտակա լաբորատորիայում...

"Փաստորեն իրոք բժիշկ ե",- մտածեց Վահեն:

-...Չբաղվում եմ սրա նմանների ուսումնասիրությամբ:

- Վիրուսների՞:

- Ըհըն: Ու օրերից մի օր շատ պատահական կերպով... ես պարզապես շատ էի խորասուզվել աշխատանքիս մեջ ու... մի խոսքով, փորձանոթը լվացարանի մոտ փշրվեց ձեռքիս մեջ: Վիրուսն անցավ կոյուղի, այնտեղից էլ... հողի մեջ:

-Դրա համա՞ր են բոլորին էվակուացրել:

-Այո: Բայց նրանք սխալվում են:

-Ինչու՞մ:

-Վիրուսի երկու ենթատեսակ կա: Մեկը՝ Ա տեսակը, մեր տարածքին վաղուց հայտնի է "փոշոտ վիրուս" անվամբ: Այն հողից, կարելի է ասել, ցնդում է, ընկնում շնչուղիների մեջ ու վարակում մարդկանց, բոլորին, առանց բացառության: Դա հենց այն վիրուսն է, որի ժամանակ իրոք հարկ կա մարդկանց տարահանելու..

-Եվ... կա նաեւ դրա...,- Վահեն հեւոցով շունչ քաշեց,- ա՛յլ տեսակը:

-Կա: Եվ դա հենց այն տեսակն է, որ ես թափեցի լվացարանը: Որով ես եմ... վարակված: Այն արյունով է փոխանցվում:

-Դուք վարակվեցիք, որովհետեւ փորձանոթը կոտրվեց:

-Այո: Եվ վիրուսն անցավ արյանս մեջ:

-Իսկ տարահանման կարիքը, ինչպես հասկանում եմ, չկար:

-Ես փորձում էի նրանց համոզել, որ սա այլ տեսակ է: Բայց խուճապն իրենը արեց: Նրանցից ոչ ոք... այդ վիրուսի Բ ենթատեսակի մասին չգիտեր: Այն նոր-նոր էինք սկսել ուսումնասիրել: -Բայց եթե միակ վարակվածը դուք էիք...

-Յենց դրա համար էլ խիղճս ինձ կրծում է: Ես արյունս հետագոտեցի, բայց ոչինչ չհայտնաբերեցի: Ոչ մի հակամարմին:

-Այսինքն:

-Ես կարծեցի, թե հիվանդ չեմ: Եվ շատ ուշ հասկացա, որ համոզվելու համար պետք էր սպասել եւս մի շաբաթ: Երիկամների խնդիրներ ունեմ: Այդպիսի խնդիրներով մարդիկ, ա՛խ,- Մարկոյի մարմնի արյունազեղող վերքերը թարմ արյամբ ողողվեցին, - պարտավոր են պարբերաբար հեմոդիալիզի հաճախել: Իմ արյունը, փաստորեն, վարակված էր, իսկ կենտրոնի աշխատողներն անպատասխանատու գտնվեցին: Սարքը լավ չեն մանրեագերծել: Դրա համար էլ... դիալիզի միջամտությանը դիմած բոլոր հիվանդները վարակվել են: Նրանք մի կաթիլ քրտինք էլ չթափեցին՝ պարզելու համար կատարվածը: Քաղաքը դատարկվել է...

- Չանգիստ եղեք, մեզ կփրկեն: Ամեն ինչ լավ կլինի: Խոսքերին հաջորդեց սվսվացող հազը: -Ի՞նչ ես կարծում, ես արժանի՞ եմ փրկության:

Մարկոյի աչքերի առաջ մթնեց, թվում էր, թե նա դանդաղորեն ներծծվում է սեւ խոռոչի մեջ: Մաշկի տակ վազվզում էին էլեկտրոնները: Օբյեկտիվ իրականության եւ հիվանդագին սարսափի միջեւ կերտված մութ թունելով սողալիս պրոֆեսորի ականջին հասան սուլոցներ: Դրանք աստիճանաբար էլ ավելի էին մոտենում: Նավն է: Փրկության նավը: "Ամեն ինչ լավ կլինի": Սպիտակ համազգեստով մարդիկ բռնեցին թելերից եւ քաշեցին իրենց հետեւից: Ովքե՞ր էին նրանք, հրեշտակներ՞: Մարկոն արդեն մահացե՞լ էր: Աչքերի առջեւ շողաց կուրացնող լույսը՝ երեք կարճ առկայծում, երեք երկար, նորից երեք կարճ...

-Սպասե՛ք, ներսում էլի մարդ կա: Նրան էլ վերցրեք: Ափի մանր քարերը ցուցում էին՝ իրենց խոնավ մակերեւույթները լուսնին դեմ տալով: Դրանք այս ու այն կողմ թռան, երբ հիվանդին մոտեցավ եւս մի սպիտակ ուրվագիծ:

-Ներսում էլի երկուսը կան, բայց մահացած են: